ՀԱՆԳԻՍՏ

Տ. ՄԱՏԹԵՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԻՆՃԵՅԱՆԻ

Մանչեստրից Ամենայն Հայոց Հայրապետի անունով ստացված հեռագիրը գուժեց տեղի հոգևոր հովիվ Մատթեոս Արքեպիսկոպոս Ինճեյանի մահը:

Հանգուցյալ Սրբազանը ծնվել է Գումգաբուում 1877 թվին: Իր նախնական և միջնակարգ կրթությունը նա ստացել է տեղական դպրոցներում, իսկ բարձրագույնը՝ Փարիզի Իրավաբանական Համալսարանում: Այնուհետև նա Արմաշի Դպրեվանքում կրոնական հարկավոր պատրաստությունը ստանալուց հետո, 1909 թվին, Սկյուտարի Ս. Կարապետ եկեղեցում, հոգելույս Իզմիրլյանի կողմից ձեռնադրվում է վարդապետ: Նա այստեղ կարճ ժամանակ պաշտոնավարելուց հետո, առաջնորդության է կանչվում Սիս, իսկ այնուհետև տեղափոխվում է Զմյուռնիա առաջնորդական պաշտոնով ու երկար տարիներ մնում այստեղ: 1914 թվին, տեղի խառը ժողովի միջնորդությամբ, եպիսկոպոս է օծվում Էջմիածնում Տ. Գեորգ Ե.ի կողմից նույն թեմի վրա: Հետագայում նա վարում է Սամսոնի առաջնորդությունը, Եվրոպայի Հոգևոր հովվությունը, և վերջում, իր առողջական վիճակի բերադրանքով, հանձն է առնում Մանչեստրի հոգևոր հովվությունը: 1932 թվին, Խորեն կաթողիկոսի ընտրության ժամանակ, որպես պատգամավոր եկել է Ս. Էջմիածին և Վեհափառ Հայրապետից ստացել արքության աստիճան:

Մատթեոս Արքեպիսկոպոսի մահով Հայաստանյայց եկեղեցին կորցնում է մեծ առաքինություններով օժտված իր բարձրաստիճան մի հոգևորականին, որը ազնվաբար արել է կարելին իր եկեղեցու և իր ժողովրդի համար:

Տերը լուսավորե նրա հոգին: